	նա սկսաւ պատմել մի ըստ միոջէ:
	- ... Բայց ճանապարհին ոմանք ի սպասաւորացն գողացեալ են զ20 վաթիէ ոսկին, որ է 480 դուրուշ եւ փախուցեալ են: Եւ ապա եմուտ ի նաւակն Կարմիր ծովուն էանց ի Ճիտտէ եւ անտի գնացեալ է յԵգիպտոս: ...
165r-176r	ԳԼՈՒԽ ԻԳ. Յաղագս արարեալ վանառիցն եւ մեծի հիւանդութեան եւ բժշկութեան Թովմանանի եւ յաղագս որպիսի եղանակաւ վանառականապետ լինելոյ Քարա Հալիլ բաշայի Եգիպտոսի եւ թէ որպէս գնացեալ յԵգիպտոս ծառայեաց նմա եւ յետ վեշտասան ամսոյ եղեւ վանառականապետ եւս սուլթան Համիտ թագաւորին Լալային եւ դարձաւ ընդ նմա 'ի Կոստանդնուպոլիս:
171v-172r միջեւ սոսնձուած թերթ, ի լրումն 172r տեքստի: Փաստաթղթի բ էջում՝	*Հայր Պօղոս Մէհէրեանի նամակը Յովհաննէս Թովմաճանեանին՝*
	- Բարեպաշտօն եւ Քրիստոսասէր ազնուականիդ պարոն մահտեսի Թումանանիդ երախտաւորի մերում բազում սիրով ողջոյն ի տէր:
	Զիք եւ չիք ոք ի մարդկանէ, որ միանգամ եւեթ ընդ ումեք աղիւ եւ հացիւ վայելեալ ի բարիս նորին զնոյն հատուկդիր շիջուցանել ջանացէ թէեւ ի բարբարոսաց բարբարիկոն ոք իցէ, այլ հանապազ զմտաւ ածելով զհատուցումն ի Տեառնէ խնդրելով երախտեացն փոխարէն: Իսկ իմ ոչ եթէ մոռանալով զմարդասիրութիւնդ, զոր մեզ արարիր ի պանդխտութեան մերում...
	- ... Յամին 1774 ի հոկտեմբերի 16, ի մայրաքաղաքին Կարնոյ:
	Նուաստ ծառայ Հայր Պօղոս Մէհէրեան կրօնավոր Մխիթարեան:
172v-173r միջեւ սոսնձուած երկու	*Երուսաղէմի Պօղոս պատրիարքի ողջունագիրը Յովհաննէս Թովմաճանեանին*[32]՝

32 *Թուչնագարդ գրութեան վերեւում Տիրոջ պատկերով կարմիր երկչրջանագիծ պատրիարքական կնիք՝* «Է. Յ[իսուս]ի Ք[րիստոս]ի ծ[ա]ռ[այ] Պօղոս Վ[ա]րդ[ապե]տ Պ[ա]տր[իար]ք Ս[ր]ք[ո]յ Երուսաղէմայ, թվ[ին] ՌՄԺԷ» մակագրութեամբ]: *Հասցէն՝* «Աստուծով հասցէ գիրս 'ի քաղաքն Մըսըր. 'ի ձեռն Թումանանեան բարեպաշտօն մահդեսի Յով[հ]աննէս յարգելի ամիրային, ի բարին»: *Թովմաճանեանի ձեռքով՝* «1773 սեպտեմբեր 12. յԵրուսաղիմէն գերերջանիկ Պօղոս պատրիարգէն. հասաւ յԵգիպտոս հոկտեմբեր 25ին»: *Ընդգծուած տողը գրուած է կարմիր մելանով:*